Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻ Բ-ԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրտակցության գիր է առաքել Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Ալեքսի Բ-ին՝ Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաքում ահաբեկիչների խմբի կողմից Մոսկվայի Մշակույթի Տան գրավման և հարյուրավոր անձերի պատանդ վերցնելու առնչությամբ: Նամակում Նորին Սրբությունը, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, իր ցավն ու վրդովմունքն է հայտնել ահաբեկիչների իրականացրած բռնարարքի վերաբերյալ:

Հայոց Հայրապետի ուղերձում ի մասնավորի նշվում է. *«Ահաբեկչություններն ու բռնարարքները չեն մարդկության ապագան: Խաղաղ ու ստեղծագործ համակեցությամբ միայն ժողովուրդները պիտի կառուցեն իրենց կյանքը՝ նպաստելով աշխարհում համերաշխության ամրապնդմանն ու զորացմանը և սիրո ու բարու հաղթանակին:*

Խաղաղասեր ողջ մարդկության հետ մեր Եկեղեցին դատապարտում է ահաբեկչության նմանատիպ ցանկացած դրսևորում՝ ուղղված մարդկության դեմ»:

Վեհափառ Հայրապետը նաև աղոթք է մատուցում Բարձրյալին, որպեսզի Երկնավոր Տերը համբերություն և հոգու ամրություն պարգևի Նորին Սրբություն Ալեքսի Բ Պատրիարքին, պատանդներին ու նրանց հարազատներին և ռուս հավատավոր ողջ ժողովրդին՝ հաղթահարելու բռնարարքի ծանր փորձությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ